ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՍՏՈԿՀՈԼՄԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻՆ

ՍՏՈԿՀՈԼՄ

Քրիստոնեական հավատքի կեդրոն բազմադարյան Ս. էջմիածնեն ողջույն և օրհնություն Ձեր համագումարին, որտեղ աշխարհի բոլոր երկրներեն հավաքված ներկայացուցիչներ կոչոնեք հանապարհները ազգերու միջև խաղաղ գոյակցության ու նշմարիտ բարեկամության:

Հանուն Հայ Եկեղեցվո և մեր հավատացյալ ժողովուրդի, Մենք ի սրտե կմաղթենք Ձեզ լիակատար հաջողություն՝ ի մխիթարություն և հուսախություն բոլոր ժողովուրդներու: Մենք ևս, ոգեշնչված նույն իդեալներով, բոլոր եկեղեցիներու կողքին, կոչ կընենք պետություններու մեծարգո ղեկավարներուն՝ լսել համայն մարդկության խղճի ձայնը և արբությամբ պահպանել խաղաղության աստվածառաք պատգամը, արգիլել ամեն տեսակի ատոմական զենքերու գործածություն և փորձարկումներ ու աշխարհի վրա վերջնականապես հաստատել վիճելի հարցերը փոխադարձ հասկացողությամբ ու արդարությամբ լուծելու փրկարար և կենարար կանոնը:

Ամեն բանի մասին կարելի է տարակարծիք ըլլալ և վիճիլ, խաղաղությունը սակայն վեր պետք է ըլլա ամեն վեճե և դառնա բոլորին համար մտածելու ու գործելու գերագույն կանոն ամեն տեսակի հարցերը լուծելու:

Աստված խաղաղության բող ոգեշնչե զՁեզ և Ձեր սրտերու ջերմությամբ կենդանություն թող ստանա խաղաղության սպիտակ աղավնին, խորհրդանիշը մեր օրերու բոլոր մարդոց և բոլոր ժողովուրդներու ամենահարազատ իղձերուն:

Վ. Ա. Զ Գ Ե Ն Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

15 հուլիս 1958
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ